

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2025

ՀՈՒՆՎԱՐ - ՓԵՏՐՎԱՐ

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարրերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույթի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույթը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ճնարությը:**

Առաջադրանքները կատարելուց հետո շմոռանար պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ճնարություն: Պատասխանների ճնարությի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մարդում ենք հաջողություն:

1 Ո՞ր սնկերին է պատկանում մուկորը.

- 1) մակաբույծ սնկերին
- 2) գլխարկավոր սնկերին
- 3) բորբոսանկերին
- 4) խմորասնկերին

2 Որո՞նք են բարձրակարգ սպորավոր բույսեր.

- 1) ծածկասերմերը
- 2) մերկասերմերը
- 3) ջրիմուռները
- 4) ձիաձետերը

3 Ի՞նչն է բնորոշ երկարքիլավոր բույսերի մեծամասնությանը.

- 1) էնդոսպերմում պաշարանյութերի կուտակումը
- 2) ցողունում կամբիումի շերտի առկայությունը
- 3) տերևների աղեղնաջիղ ջղավորությունը
- 4) սերմնամաշկի դժվար անջատումը

4 Ո՞ր որդն է պատկանում օղակավոր որդերի տիպին.

- 1) ներեխը
- 2) ասկարիդը
- 3) եզան երիզորդը
- 4) սպիտակ պլանարիան

5 Զկան գլխուղեղի ո՞ր բաժնից են դուրս գալիս տեսողական նյարդերը.

- 1) երկարավոր ուղեղից
- 2) միջակա ուղեղից
- 3) առջևի ուղեղից
- 4) ուղեղիկից

6 Թվարկված կենդանիներից որի՞ ճվարջիջը հարուստ չէ դեղնուցով.

- 1) բաղակտուցի
- 2) մողեսի
- 3) շան
- 4) աղավնու

7

Ի՞նչ է տեղի ունենում մարդու օրգանիզմում արյան մեջ աղբենալինի քանակի ավելացման դեպքում.

- 1) սրտի աշխատանքը դանդաղում է, գլյուկոզի քանակն արյան մեջ՝ նվազում
- 2) արագանում է սրտի աշխատանքը, բարձրանում է արյան ճնշումը
- 3) արյան մեջ նվազում է գլյուկոզի քանակությունը
- 4) լայնանում են արյունատար անոթները, սինթեզվում է մեծ քանակությամբ գլիկոզեն

8

Ո՞ր գործընթացն է մարդու սիմպաթիկ նյարդային համակարգի դրդման արդյունք.

- 1) բիբերի նեղացում
- 2) անոթազարկի դանդաղում
- 3) ստամոքսահյութի արտադրման ճնշում
- 4) աղբենալինի արտադրման ճնշում

9

Մարդու մեծ կիսազմների կեղևի ո՞ր բլթերն է բաժանում կենտրոնական ակոսը.

- 1) գագաթային և ծոծրակային
- 2) քունքային և գագաթային
- 3) ճակատային և քունքային
- 4) ճակատային և գագաթային

10

Մարդու ո՞ր անոթներով է հոսում երակային արյուն.

- 1) քոքային զարկերակներով և երիկամներ մտնող անոթներով
- 2) քոքային երակներով և դրաներակով
- 3) նեֆրոնի պատիճի առբերող և արտատար անոթներով
- 4) քոքային զարկերակներով և սիներակներով

11

Ինչի՞ն են նպաստում մարդու քրի խոռոչի լորձաթաղանթի արյունատար անոթները.

- 1) ներշնչվող օղի խոնավացմանը
- 2) ներշնչվող օղի տաքացմանը
- 3) արտաշնչվող օղից հոտավետ նյութերի կլանմանը
- 4) ներշնչվող օղի խոնավացմանը և մաքրմանը

12

Ո՞ր մարդու վերին վերջույթի կմախքի ուսկոր չէ.

- 1) կրծոսկրը
- 2) բազկոսկրը
- 3) բիակոսկրը
- 4) անրակոսկրը

13

Ո՞ր տիպի իմունիտետն է ձևավորվում մարդու օրգանիզմում բուժիչ շիճուկ ներարկելիս.

- 1) արհեստական պասիվ
- 2) բնական ձեռքբերովի
- 3) բնական բնածին
- 4) արհեստական ակտիվ

14

Ո՞ր պնդումն է ճիշտ վիտամին B₁-ի վերաբերյալ.

- 1) հանդիսանում է էներգիայի աղբյուր, թերվիտամինոզի դեպքում խթանվում է ռողովասինի սինթեզը
- 2) ավիտամինոզի դեպքում զարգանում է թերի-թերի հիվանդությունը, ջրալույծ է
- 3) թերվիտամինոզի կամ ավիտամինոզի դեպքում զարգանում են մաշկի և լորձաբաղանքների խոցեր, ճարպալույծ է
- 4) ջրալույծ է, ավիտամինոզի դեպքում զարգանում է շարորակ սակավարյունություն

15

Ինչի՞ է հանգեցնում մարդու օրգանիզմում քրտնարտադրության ուժեղացումը և մաշկի արյան անորոշների լայնացումը.

- 1) օրգանիզմի պաշտպանմանը գերտարացումից
- 2) մարմնի զերմաստիճանի բարձրացմանը
- 3) արյան ճնշման բարձրացմանը
- 4) արյան հոսքի արագացմանը

16

Ի՞նչ միացություն չի պարունակում մարդու թուքը.

- 1) լիզոցիմ
- 2) մալթազ
- 3) պտիալին (ամիլազ)
- 4) պեպսին

17

Ո՞ր ածխաջուրն է պատկանում մոնոսախարիդներին.

- 1) խիտինը
- 2) գլյուկոզը
- 3) գլիկոգենը
- 4) քաղանքանյութը

18

Ինչո՞վ են միտոքոնդրիումները և քլորոպլաստները տարրերվում կորիզից.

- 1) պարունակում են ԴՆԹ-
- 2) ունեն արտաքին և ներքին քաղանքներ
- 3) նրանցում տեղի է ունենում ԱԵՖ-ի սինթեզ
- 4) պարունակում են ՌՆԹ-

19

Քջում որտե՞ղ է կատարվում ռիբոսոմների մեծ և փոքր մասնիկների (ենթամիավորների) ձևավորումը.

- 1) Գոլջիի ապարատում և էնդոպլազմային ցանցում
- 2) կորիզակում
- 3) միտոքոնդրիումներում, քլորոպլաստներում և վակուոլներում
- 4) քջակենտրոնում

20

Որտե՞ղ են ձևավորվում լիզոսոմները.

- 1) ռիբոսոմներում
- 2) միտոքոնդրիումներում
- 3) Գոլջիի ապարատում
- 4) պլազմային քաղանքի վրա

21

Էռոկարիոտ քջում որտե՞ղ է տեղի ունենում տրանսկրիպցիայի գործընթացը.

- 1) քջակորիզում
- 2) ռիբոսոմներում
- 3) հարթ էնդոպլազմային ցանցում
- 4) հատիկավոր էնդոպլազմային ցանցում

22

Ո՞ր պրոցեսն է տեղի ունենում ինտերֆազի G₂ փուլում.

- 1) քջային կենտրոնի ցենտրիոլների կրկնապատկումը
- 2) ԴՆԹ-ի կրկնապատկումը
- 3) հնմողգ քրոմոսոմների տրամախաչումը
- 4) ցիտոլինեզը

23

Ո՞րն է միտոզի և մեյոզի նմանությունը.

- 1) մեյոզի երկրորդ բաժանման անաֆազում քջի բևեռներ են տեղափոխվում քրոմատիդները՝ ինչպես միտոզի անաֆազում
- 2) մեյոզի առաջին բաժանման անաֆազում քջի բևեռներ են տեղափոխվում հոմոլոգ երկքրոմատիդային քրոմոսոմները՝ ինչպես միտոզի անաֆազում
- 3) երկու բաժանումների արդյունքում էլ առաջանում են նույն թվով և քրոմոսոմային հավաքակազմով հավասար քիչներ
- 4) երկու բաժանումների դեպքում էլ տեղի են ունենում կոնյուգացիա և կրոսինգովեր

24

Ինչպես է կոչվում առանց քեղմնավորման սաղմի և սերմի զարգացումը բույսերում.

- 1) վեգետատիվ բազմացում
- 2) անսեռ բազմացում
- 3) ապոմիքսիս
- 4) հետսաղմնային զարգացում

25

Ի՞նչ է գենոտիպը.

- 1) օրգանիզմի բոլոր գեների ամբողջությունը
- 2) սեռական քրոմոսոմներում գտնվող գեների ամբողջությունը
- 3) մեկ քրոմոսոմում գտնվող գեների ամբողջությունը
- 4) X քրոմոսոմում գտնվող գեների ամբողջությունը

26

Ինչպիսի՞ ֆենոտիպ կստացվի կանաչ սերմերով ոլորի ինքնափոշոտման արդյունքում.

- 1) 50 % կանաչ և 50% դեղին սերմերով
- 2) 25 % կանաչ և 75% դեղին սերմերով
- 3) 75 % կանաչ և 25% դեղին սերմերով
- 4) 100% կանաչ սերմերով

27

Ո՞ր կենդանիներին է բնորոշ արական հետերոզամետությունը.

- 1) քոչուններին
- 2) սողուններին
- 3) կարնասուններին
- 4) պոչավոր երկենցաղներին

28

Ի՞նչ հարաբերություն է ստացվում հետերոգիզոտ առանձնյակների միահիքքիդ խաչասերման արդյունքում՝ ոչ լրիվ դոմինանտության դեպքում.

- 1) 3:1 ճեղքավորում՝ ըստ գենոտիպի
- 2) 3:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի
- 3) 1:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի և գենոտիպի
- 4) 1:2:1 ճեղքավորում՝ ըստ ֆենոտիպի և գենոտիպի

29

Մարդու ո՞ր իիվանդության պատճառն է առտոսոմներում գտնվող մուտանտ ռեցեսիվ գենը.

- 1) ալբինիզմի
- 2) Մարֆանի սինդրոմի
- 3) պոլիդակտիլիայի
- 4) Քլայնֆելտերի սինդրոմի

30

Ինչպես են անվանում այն փոփոխությունները, որոնք չեն ժառանգվում և օնտոգենեզի ընթացքում ձեռք են բերվում որպես հարմարանքներ.

- 1) անորոշ
- 2) մուտացիոն
- 3) մոդիֆիկացիոն
- 4) համակցական

31

Առանձնյակներին մեկ պոպուլյացիայի մեջ միավորող գործոններից ո՞րն է զլիսավորը.

- 1) սեռահասուն և ոչ սեռահասուն առանձնյակների փոխհարաբերությունները
- 2) ժամանակի ընթացքում առանձնյակների միմյանց նմանվելը
- 3) ազատ խաչասերման հնարավորությունը
- 4) ընդիանուր թշնամիների առկայությունը

32

Ո՞րն է արոմոքոնգ.

- 1) նախազգուշացնող գունավորումը
- 2) հովանավորող գունավորումը
- 3) ֆոտոսինթեզը
- 4) միմիկրիան

33

Էկոլոգիական գործոններից ո՞րն է կենսածին.

- 1) օրվա տևողությունը
- 2) քամու արագությունը
- 3) ջրի քիմիական կազմությունը
- 4) միջատներով բույսերի փոշոտումը

34

Ո՞րն է էկոհամակարգերի երկրորդային արտադրանքը.

- 1) պրոդրուցենտրների կենսագանգվածի աճը միավոր ժամանակում
- 2) ռենդուցենտրների և պրոդրուցենտրների կենսագանգվածի ավելացման արագությունը
- 3) էկոհամակարգը կազմող բոլոր կենդանի օրգանիզմների գումարային զանգվածը
- 4) կոնսումենտների կենսագանգվածի ավելացման արագությունը

35

Տեսակների միջև գործող ո՞ր փոխհարաբերությունն է օգտակար միայն մեկ տեսակի համար.

- 1) կոռպերացիան
- 2) կոմենսալիզմը
- 3) մուտուալիզմը
- 4) ամենսալիզմը

36

Ի՞նչն է բնորոշ ազորէկոհամակարգերին.

- 1) օժտված են ինքնակարգավորմամբ
- 2) լրացուցիչ էներգիայի կարիք չունեն
- 3) խախտված է բնական հավասարակշռությունը
- 4) դոմինանտ տեսակները բնական ընտրության արդյունք են

(37-38) Ծագանակագույն աչքերով աջիկ տղամարդու և երկնագույն աչքերով ձախիկ կնոց ամուսնությունից ծնվեց մոր ֆենոտիպով երեխա: Ծագանակագույն աչքերը և աջիկությունը պայմանավորող գեները դոմինանտում են համապատասխանաբար երկնագույն աչքերի և ձախիկության գեների նկատմամբ և ժառանգվում են որպես առոտոսոնային շղթայակցված հատկանիշներ:

37

Որքա՞ն է շագանակագույն աչքերով աջիկ երեխա ծնվելու հավանականությունն այդ ընտանիքում.

- 1) 1/4
- 2) 1/16
- 3) 1/8
- 4) 1/2

38

Ինչպիսի՞ հնարավոր գենոտիպ ունի տղամարդը.

- 1) AABb
- 2) AaBB
- 3) AaBb
- 4) Aabb

(39-40) Արտի բոլորաշրջանը տևում է 0,8 վայրկյան: Առողջ մարդու հարաբերական հանգստի վիճակում գտնվող արտի փորոքների կծկման տևողությունը 120 վայրկյան է:

39

Որքա՞ն է արտի աշխատանքի տևողությունն (վրկ) այդ ընթացքում.

- 1) 320
- 2) 120
- 3) 40
- 4) 200

40

Քանի՞ վայրկյան է նախասրտերի քուլացումն այդ ընթացքում.

- 1) 40
- 2) 280
- 3) 120
- 4) 200

41

Գտնել միջատի բերանային ապարատի տիպի (նշված է աջ սյունակում) և հասուն միջատի (նշված է ձախ սյունակում) համապատասխանությունը: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Հասուն միջատ

Բերանային ապարատի տիպ

- | | |
|--------------|---------------|
| A. փայտողիլ | 1. կրծող-ծծող |
| B. թիթեռ | 2. ծակող-ծծող |
| C. խավարասեր | 3. ծծող |
| D. մոծակ | 4. կրծող |
| E. ծղրիդ | |
| F. ճաղուռ | |
| G. մեղու | |

42

Մարդու մեզի ո՞ր տեսակին (նշված է աջ սյունակում) ո՞ր առանձնահատկությունն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Առանձնահատկություն

Մեզի տեսակ

- | | |
|--|----------------|
| A. լցնում է երիկամի ավագանը | 1. երկրորդային |
| B. առաջանում է հետադարձ ներծծման արդյունքում | 2. առաջնային |
| C. լցնում է նեֆրոնի պատիճը | |
| D. առաջանում է ֆիլտրման եղանակով | |
| E. օրվա ընթացքում առաջանում է 150-170 լ | |
| F. հոսում է հավաքող խողովակով | |
| G. բաղադրությամբ մոտ է արյան պլազմային | |

43

Ի՞նչ համապատասխանություն կա սաղմնային թերթիկի (նշված է աջ սյունակում) և նրանից զարգացող հյուսվածքի, օրգանի (նշված է ձախ սյունակում) միջև: Նշել ճիշտ համապատասխանություններն ըստ հերթականության.

Հյուսվածք, օրգան

Սաղմնային թերթիկ

- A. աղիքի էպիթել
- B. նյարդային համակարգ
- C. խոիկների էպիթել
- D. բոքերի էպիթել
- E. ոսկրային հյուսվածք
- F. մաշկի էպիթել
- G. ատամների էմալ
- H. մկանային հյուսվածք

- 1. մեզոդերմ
- 2. էնտոդերմ
- 3. էկտոդերմ

44

Փոփոխականության ո՞ր ձևին (նշված է աջ սյունակում) ո՞ր օրինակն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրինակ

Փոփոխականության ձև

- A. ֆիզիկական մեծ բեռնվածությունների ժամանակ մկանների զանգվածի աճ
- B. նուկլեոտիդների մեկ զույգի փոխարինում
- C. հապլոիդիա
- D. պոլիպետիդային շղթայի ամինաթթվի փոխարինում
- E. բեղմնավորման ժամանակ զամենների պատահական զուգակցում
- F. աշնանը տերևների զույնի փոփոխություն
- G. տրիսոմիա

- 1. համակցական փոփոխականություն
- 2. ֆենոտիպային փոփոխականություն
- 3. գենային մուտացիա
- 4. գենոմային մուտացիա

45

Մարդու օրգանիզմի կառուցվածքի ո՞ր առանձնահատկությանը (նշված է ձախ սյունակում) և եվոլյուցիայի ո՞ր ապացույցն է (նշված է աջ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կառուցվածքի առանձնահատկություն

Ապացույց

- A. մաշկային մկաններ
- B. պոչի առկայություն
- C. կույր աղիքի որդանման ելուստ
- D. պոչուկ
- E. դեմքի խիտ մազածածկույթ
- F. լրացույիչ պտուկներ
- G. երրորդ կոպի մնացորդ

- 1. ատավիզմ
- 2. ռուդիմենտ

46

Նշել գորտի օրգանիզմ օղի անցման և հեռացման միջև ընկած ժամանակահատվածում իրականացվող գործընթացների ճիշտ հաջորդականությունը.

1. օղը քրանցքերով անցնում է բերանակլանային խոռոչ
2. օղը մղվում է դեպի թոքերը
3. բերանակլանային խոռոչում ստեղծվում է նոսրացած տարածություն
4. փակվում են քրանցքերի փականները
5. բերանակլանային խոռոչի հատակը բարձրանում է
6. բերանակլանային խոռոչի հատակն իջնում է
7. օղը թոքերից դուրս է գալիս մարմնի պատերի և ներքին օրգանների մկանների կծկման շնորհիվ

47

Նշել պայմանական ռեֆլեքսի ձևավորման փուլերի ճիշտ հաջորդականությունը:

1. Ժամանակավոր կապի առաջացում
2. ոչ պայմանական ռեֆլեքսի գրգռիչի և անտարբեր գրգռիչի գուգակցում
3. պայմանական ռեֆլեքսի դրսևորում
4. անտարբեր գրգռիչի վերածում պայմանական գրգռիչի
5. ամրապնդում

48

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում արյան մակարդման գործընթացները մարդու օրգանիզմում:

1. թրոմբի առաջացում
2. ֆիբրինոգենի բնափոխում
3. թրոմբոցիտների քայլայում
4. ֆիբրինի առաջացում
5. թրոմբոցիտների հպում արյունատար անորի անհարթ մակերևույթին
6. արյան պլազմայի մեջ թրոմբինի արտազատում
7. արյունատար անորի պատի վնասում

49

Ի՞նչ հաջորդականությամբ են իրականանում գործընթացները մարդու տեսողական վերլուծիչի գործառույթի իրականացման ժամանակ:

1. նյարդային ազդակների հաղորդում մեծ կիսագնդերի կեղև
2. լույսի ճառագայթների բեկում ակնաբյուրեղով անցնելիս
3. լույսի ճառագայթների անցում աչքի խցիկների հեղուկով
4. լույսի ճառագայթների արտացոլում առարկայի մակերևույթից
5. լույսի ճառագայթների անցում եղջերաբաղանքով
6. տեսողական զգայության ձևավորում
7. ցանցաբաղանքի ընկալական բջիջների գրգռում

50

Նշել կենդանական օրգանիզմում սպիտակուցի մոլեկուլի առաջացման ժամանակ պլոցենների ճիշտ հաջորդականությունը.

1. պեպտիդային կապերի առաջացում
2. հիդրոֆոր փոխազդեցությունների և -S-S- կովալենտ կապերի քայլայում
3. ջրածնային կապերի առաջացում
4. ամինաթթուների ներմուծում բջիջ
5. պեպտիդային կապերի քայլայում
6. սպիտակուցի տարածական կառուցվածքի խախտում
7. ջրածնային կապերի քայլայում
8. հիդրոֆոր փոխազդեցությունների և -S-S- կովալենտ կապերի առաջացում
9. սպիտակուցների ներմուծում օրգանիզմ

51

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները ծաղկավոր քույսերի սեռական բազմացման ժամանակ:

1. սերմի առաջացում
2. սպերմիումի և ձվարջի միաձուլում
3. միկրոսպորի առաջացում
4. փոշեխողվակի ներթափանցում սաղմնապարկ
5. գեներատիվ և վեգետատիվ բջիջների առաջացում
6. փոշոտում
7. փոշեխողվակի առաջացում

52

Նշել սերմնարանում գամետների առաջացման ժամանակ պրոցեսների ճիշտ հաջորդականությունը:

1. հոմոլոգ քրոմոսոմների տարամիտում
2. առաջին կարգի սպերմատոցիտների առաջացում
3. դիպլոիդ բջիջների բաժանում՝ դիպլոիդ բջիջների առաջացմամբ
4. երկու հապլոիդ բջիջների առաջացում
5. սպերմատոզոֆիների ձևավորում
6. տրամախաչում

53

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող քոլոր ճիշտ պնդումները.

1. աղաբբուն և աղիքահյութը ստեղծում են թթվային միջավայր, որն ակտիվացնում է աղիներում գործող մարսողական ֆերմենտները
2. հաստ աղու մանրէների ազդեցության տակ մարսվում են դեռևս չմարսված բուսական, մասամբ նաև կենդանական ծագում ունեցող ճարպերը և բարդ ածխաջրերը
3. կլլման ընթացքում մարսողական ուղու մուտքը փակվում է մակուկորդով
4. ընպանը մկանային օրգան է, որի պատերին գտնվում են լսողական փողերի անցքերը, որոնք կապում են ընպանը միջին ականջի խոռոչի հետ
5. բարակ աղիները բաժանվում են երեք մասի՝ տասներկումատնյա աղի, զստաղի և խթաղի
6. ենթաստամոքսային գեղձի գլյուկազոն հորմոնն արյան մեջ գլյուկոզի հավելյալ քանակը դարձնում է գլիկոզեն
7. ստամոքսում տարբերում են օղակաղիր, երկայնակի, թեր մկաններ

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. հողաքափիկ ինֆուզորիան շարժվում է կեղծ ոտքերի միջոցով
2. հողաքափիկ ինֆուզորիայի բջջաբերանին հաջորդում է բջջակլանը
3. սմնդի չմարսված մնացորդները հողաքափիկ ինֆուզորիայի մարմնից դուրս են գալիս արտազատող անցրով
4. հողաքափիկ ինֆուզորիան բազմանում է անսեռ եղանակով, որի ժամանակ տեղի է ունենում կոնյուգացիա
5. հողաքափիկ ինֆուզորիայի բազմացման ընթացքում կարևոր դեր է կատարում փոքր կորիզը
6. մակարույծ ինֆուզորիաներից է բալանտիդիումը

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. Ախտրիֆիկացնող բակտերիաների մի խումբն օգտագործում է ազոտային թթուն ազոտական թթվի օքսիդացնելու ժամանակ անջատվող էներգիան
2. կապտականաչ ջրիմուռները որպես ջրածնի աղբյուր օգտագործում են ջուրը, այդ պատճառով դրանց ֆոտոսինթեզն ուղեկցվում է թթվածնի կլանումով
3. բակտերիաներում ֆոտոսինթետիկ գունակները հաճախ կապված են լինում պլազմային բաղանքին
4. կապտականաչ ջրիմուռներն ունեն քլորոպլաստներ, և ֆոտոսինթեզի ընթացքում ջրի մոլեկուլներն ենթարկվում են ֆոտոլիզի
5. բակտերիաների բջջապատը կազմված է սպիտակուցներից և ածխաջրերից, հանդիպում են նաև լիպիդներ
6. կապտականաչ ջրիմուռները բազմանում են երկու մասի կիսվելով
7. բակտերիաների ԴՆԹ-ն սպիտակուցների մոլեկուլների հետ համալիրներ է առաջացնում

56

Նշել մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. կրծքավանդակի ոսկրերը միացած են միմյանց շարժուն, կիսաշարժուն միացումներով
2. գոտկային և սրբանային ողերի սերտաճումը նպաստում է հենարանային գործառույթի իրականացմանը
3. ողնաշարի կրծքային բաժնի ողի ելուստները դուրս են գալիս աղեղից
4. սրբուկրի ողերը ձևավորում են կիսաշարժուն միացումներ
5. ձկնամկանը տեղակայված է բազկային հողի վերևում
6. սեղանաձև մկանը կծկվում է թիակներն իրար մոտեցնելիս և գլուխը դեպի հետ թեքելիս

57

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. սարացենիան գիշատիչ բույս է
2. կենսացենոզով գրաղեցված տարածքն իրեն բնորոշ պայմանների և գործոնների հետ միասին կոչվում է բիոտոպ
3. կոնսումենտներին բնորոշ է սնուցման հետերոտրոֆ եղանակը
4. լրված դաշտի տարածքում լայնատերև անտառի վերականգնումը հանդիսանում է առաջնային սուկցեսիայի օրինակ
5. կենսածին նյութն իր մեջ ներառում է օվկիանոսի ջրերը, հողը, կրային ապարները, քարածուխը
6. ալոպատրիկ տեսակառաջացումը նոր տեսակի ծագումն է նախկին արեալի ներսում

58

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. Մենդելի առաջին օրենքը գեների անկախ բաշխման օրենքն է
2. Aabb գենոտիպով առանձնյակները կառաջացնեն 2 տիպի գամետներ
3. ծղրիդի, սենյակային ճանճի, աղավնու, փայտոցիլի արուների սոմատիկ բջիջներն ունեն մեկ սեռական քրոմոսոմ
4. կատուների մարմնի գումավորումը X քրոմոսմին շղթայակցված հատկանիշ է
5. համաձայն Թ. Մորգանի օրենքի՝ պտղաճանճի երկինտերոզիզոտ էզի և ռեցեսիվ հատկանիշներով արուի խաչասերման արդյունքում սերնդում ստացվում է չորս ֆենոտիպ՝ յուրաքանչյուրից 25 %
6. երկինտերոզիզոտ առանձնյակների խաչասերման արդյունքում, գույզ ալելների ոչ լրիվ դրմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում սերնդում դիտվում է գենոտիպային և ֆենոտիպային խմբերի հավասար քանակ

(59-60) Ֆուտոսինթեզի պրոցեսում կլանվել է 88 կգ CO₂: 1 մոլ զազր գրաղեցնում է 22,4 լիտր ծավալ:

59

Զանի՞ լիտր բթվածին է արտադրվել այդ ընթացքում:

60

Որքա՞ն օրգանական նյութ (գլյուկոզ) է սինթեզվել այդ ընթացքում (կգ):

(61-62) ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածում U/Q քանակական հարաբերությունը հավասար է 2,1-ի:

61

Քանի՞ նուկլեոտիդներից է կազմված տվյալ հատվածը, եթե դրանում գուանինային մնացորդների քանակը հավասար է 2400-ի:

62

Քանի՞ ամինաթթվից կազմված սպիտակուց է կոդավորում ԴՆԹ-ի այդ հատվածը:

63

Տարվա ընթացքում արեգակնային ճառագայթման էներգիայի հոսքը մարզագետին կազմել է $8 \cdot 10^{10}$ կՋ/հա: Մեկ հեկտար մարզագետինի վրա մեկ տարվա ընթացքում աճում է 20000 կգ խոտ: Առաջնային արտադրանքի յուրաքանչյուր 1 գ-ում կուտակվում է մոտ 30 կՋ: Արեգակնային էներգիայի քանի^o տոկոսն է յուրացնում մարզագետինը: Պատասխանը բազմապատկել 100-ով:

64

Քանի^o լիսոր թթվածին է յուրացվել մարդու օրգանիզմում 8 ժամ տևողությամբ աշխատանքի ընթացքում, եթե աշխատանք կատարելիս մարդու շնչառական շարժումներն արագանում են 1,5 անգամ, շնչառական ծավալն աճում է 1,6 անգամ, իսկ յուրացվող թթվածնի ծավալն ավելանում է 25 %-ով: Ընդունել, որ մարդը հարաբերական հաճագայի վիճակում արթուն ժամանակ 1 րոպեում կատարում է 20 շնչառական շարժում:

- (65-66) Զերմահաղորդմամբ մաշկի միջոցով հեռանում է զերմության մինչև 15%-ը, իսկ գոլորշիացումով՝ զերմության 20%-ը: Մարմնի մակերեսը 2 մ² է, որից գոլորշիացել է 400 գրամ քրտինք:

65

Քանի՞ Չոռվ էներգիա է հեռացել մաշկի 1 մմ² մակերևույթից քրտինքի գոլորշիացման հետևանքով, եթե 1 գրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՋ էներգիա:

66

Քանի՞ կՋ էներգիա է հեռացել օրգանիզմից զերմահաղորդմամբ:

(67-68) Օրգանիկում գլյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացել է 36 մոլ CO_2 և 270 մոլ H_2O :
1 մոլ գլյուկոզից մինչև կաթնաթթու ճեղքման ընդհանուր էներգիան կազմում է 200
կՋոուլ, իսկ ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կՋոուլ/մոլ էներգիա:

67

Քանի՞ կՋոուլ է կազմել էներգիայի կորուստը անթթվածին փուլում:

68

Քանի՞ կՋոուլ է կազմել էներգիայի կորուստը բթվածնային փուլում:

69

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. թոքամզի թոքային թաղանթը պատում է կրծքավանդակի պատերը ներսից
2. կրծքավանդակի խոռոչի ծավալը մեծանում է, եթե մթնոլորտային օդը թափանցում է թոքեր
3. թոքերը պատված են հարթ մկանային հյուսվածքի երկշերտ թաղանթով, որոնք նպաստում են թոքերի կծկմանը և ընդարձակմանը
4. շնչառական ծավալն օդի այն ծավալն է, որը թոքեր է անցնում մեկ հանգիստ ներշնչման ժամանակ
5. աջ թոքը կազմված է երեք բլթերից, ձախը՝ երկու
6. օդի առավելագույն քանակը, որը կարելի է արտաշնչել ամենախորը ներշնչումից հետո, կոչվում է թոքերի կենսական տարողություն

70

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «Ծիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսի մասնիկը գնդիկային տեսքով կառույց է, իսկ ծխախոտի նեկրոզի վիրուսը ծողածն է
2. ֆազերն այնպիսի վիրուսներ են, որոնք բնակվում և բազմանում են բույսերի քիչներում
3. հեպատիտը, անգինան, սիֆիլիսը, թոքախտը, սիրիախտը, էնցեֆալիտը վիրուսային հիվանդություններ են
4. այն երևույթը, եթե բջջում մեկ վիրուսի առկայությունը հաճախ պաշտպանում է բջիջը այլ վիրուսի ներթափանցումից, կոչվում է ինտերֆերենցիա
5. աղիքային ցուալիկի T4 բակտերիաֆազի մարմինը կազմված է Ω-ՆԹ-ի մեկ մոլեկուլ պարունակող գլխիկից, պոչիկից և մի քանի պոչային ելուններից
6. ծխախոտի խճանկարային հիվանդություն հարուցող վիրուսը նման է սնամեջ զլանի, որի պատը կազմված է սպիտակուցի մոլեկուլներից, իսկ ներսում տեղափորված է Ω-ՆԹ-ի մեկ մոլեկուլ